Սկրտության պատմություններ

«Ռահվիրան այն անձն է, ով առաջինն է ինչ-որ բան անում»,- ասաց մայրիկը:

Նոել Լամբերթ Բարուս
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Մերին պտտվում էր և հայելու մեջ հիանում իր սպիտակ զգեստով: Դա այն նույն զգեստն էր, որը նրա մայրը հագել էր իր մկրտության ժամանակ: Մեծ տատիկ Մարլուսը ձևափոխել էր այն՝ հարմարեցնելով Մերիին: Այժմ Մերին կարող էր կրել այն իր իսկ մկրտությանը:

«Դու գեղեցիկ ես»: Մայրը բռնեց Մերիի ձեռքը և կրկին պտտեց նրան:

Մերին ծիծաղեց: «Կարո՞ղ եմ ամբողջ օրը կրել այն»:

«Արի պահենք այն քո մկրտությանը հագնելու համար, որպեսզի այն գեղեցիկ ու մաքուր մնա, լա՞վ»,- ասաց մայրիկը:

«Լավ»: Մերին մկրտվելու էր, երբ ութը լրանար, և նա արդեն որոշ ժամանակ էր պատրաստվում էր: Նա գնում էր Երեխաների միություն, կարդում էր սուրբ գրություններ և նույնիսկ գնում էր իր ընկերների մկրտությանը: Բայց նրա ծննդյան օրը այնքան հեռու էր թվում:

Մերին՝ մայրիկին գրկախառնված, նստել էր բազմոցին: «Մամ, դու քանի՞ տարեկան էիր, երբ մկրտվեցիր»:

«Ես 16 տարեկան էի»:

«Օ՜հ: Ինչո՞ւ ես դու այդքան երկար սպասել»:

Մայրիկն ամուր գրկեց Մերիին: «Քանի որ ես մինչ այդ չգիտեի Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու մասին: Բայց ես սկսեցի մասնակցել Եկեղեցու միջոցառումներին ընկերներիս հետ միասին: Եվ որքան ավելի շատ էի իմանում, այնքան ավելի էի կամենում մկրտվել»:

«Ինչո՞ւ»,- Հարցրեց Մերին:

«Քանի որ ես ուզում էի ունենալ հավերժական ընտանիք»: Մայրիկը մատն ուղղեց դեպի սենյակի պատին կախված տաճարի նկարը: Ես իմացա, որ մի օր կարող էի իմ ընտանիքների հետ հավերժորեն կնքվել տաճարում: Հավերժական ընտանիք ունենալն իմ երազանքն էր: Եվ մկրտությունը առաջին քայլն էր: Այժմ իմ երազանքն իրականանում է»:

Մերին ժպտաց: «Դու ուներս հայրիկին, Մալորիին և փոքրիկ Մայվային: Եվ, իհարկե, նաև ինձ»:

«Այո, իհարկե: Եվ տատիկ Անգելային»:

«Իսկ տատիկը քեզ հետ մկրտվե՞ց»:

«Նա սպասեց մի քանի տարի: Բայց երբ մենք ճանապարհորդում էինք տաճարների մոտով, մենք սիրում էինք կանգ առնել և նայել»:

Մերին պատկերացրեց մայրիկին և տատիկին՝ միասին տաճարներին նայելիս: «Իսկ հայրի՞կը: Քանի՞ տարեկան էր նա, երբ մկրտվեց»:

«Նա 11 տարեկան էր»:

«Եվ նա այդ ժամանակ ապրում էր Բրազիլիայո՞ւմ»:

«Ճիշտ է»,- ասաց մայրիկը: «Մարդիկ ամբողջ աշխարհում սովորում են Հիսուսի և մկրտության մասին: Նրանցից շատերը ռահվիրաներ են»:

«Ռահվիրանե՞ր»:

«Ռահվիրան այն անձն է, ով առաջինն է ինչ-որ բան անում»,- բացատրեց մայրիկը:

Մերին մտածեց այդ մասին: «Ինչպես դո՞ւ էիր քո ընտանիքում առաջին մկրտվողը»:

Մայրիկը գլխով արեց ու ժպտաց:

Հենց այդ պահին հայրիկը ներս մտավ և նստեց բազմոցին:

«Հայրիկ, իսկ դու քո ընտանիքում ռահվիրա՞ ես եղել»:

«Գրեթե: Մկրտվելուց հետո ես իմացա, որ Ռոզիմեր տատիկն արդեն իսկ եկեղեցու անդամ էր: Բայց նա տարիներ շարունակ չէր եղել այնտեղ»:

«Իրո՞ք: Ինչպե՞ս պատահեց դա»:

«Ես սկսեցի եկեղեցի գնալ: Ապա իմ եղբայրները սկսեցին գնալ, իսկ հետո նաև Ռոզիմեր տատիկը:

ՆԱՄՈՆԵՐԸ ԹԱՄԻ ԼՈՒԾԻ

Մեզ միացավ նույնիսկ մեծ տատիկ Մարլուսը»:

Մերին պատկերացրեց հայրիկին մենակ եկեղեցի գնալիս, ապա ընտանիքի ավելի շատ անդամների իր հետ բերելիս:

«Օ՜հ»,- ասաց Մերին: «Ինձ դուր է գալիս ձեր պատմությունները լսելը: Դրանք ավելի են ոգեշնչում ինձ մկրտվել»:

«Մերի, շնորհակալ ենք այս բոլոր հարցերը մեզ տալու համար»,- ասաց հայրիկը: «Այժմ կարո՞ղ ենք մենք քեզ մի հարց տալ»:

Մերին գլխով արեց: Նրանք ի՞նչ կհարցնեն:

«Ինչո՞ւ ես դու ուզում մկրտվել»:

Մերին մտաբերեց սուրբ գրություններից սովորածը և եկեղեցում իր ունեցած զգացողությունները: «Որովհետև ես ուզում եմ հետևել Հիսուսին և հավերժ լինել իմ ընտանիքի հետ»:

Մայրիկն ու հայրիկը երկուսն էլ ժպտացին, և Մերին գրկեց նրանց երկուսին: «Ես անհամբեր սպասում եմ»: ●